ԳԼԱՁՈՐ

Բնակավայրի վարչական ղեկավար՝ Նաիրի Մարտիրսյան
Հեռախոս՝ +374 93787878

Գլաձորի բնակավայրը գտնվում է Հայաստանի Հանրապետության Վայոց ձոր մարզի Եղեգնաձորի տարածաշրջանում, Եղեգնաձոր քաղաքից մոտ 3 կմ. հյուսիս: Մայրաքաղաք Երևանից ունի 120 կմ. հեռավորություն, ծովի մակարդակից՝ 1350 մ. բարձրություն: Կլիման մերձարևադարձային է, չոր, ցամաքային: Ամռանը շոգ է, ձմռանը՝ ցուրտ: Տարեկան տեղումների քանակը 300-350 մմ. է :

Գլաձոր գյուղը հիմադրվել է 1830 թվականին: Ներկայիս բնակիչները 1830-ական թվականներին ներգաղթել են ռուս-պարսկական պատերազմի տարիներին, Պարսկահայաստանի Խոյ, Սալմաստ գավառներից: 1831թ. գյուղն ունեցել է 128 բնակիչ , 2011թվականի մարդահամարի տվյալներով՝ 2721:

Համայնքի շրջակայքում պահպանվել են Պռոշյան իշխանների բերդի պարսպի մեծ մասը, խաչքարեր, գերեզմանատներ: Համայնքի տարածքում է գտնվում <Սպիտակավոր> պատմամշակութային հուշարձանը, <<Սուրբ Հակոբ>> եկեղեցին, չորս մատուռներ:

<<Սպիտակավորը>> կառուցվել է XII-րդ դարում Պռոշյանների կողմից: 20-րդ դարի 80-ական թվականներին հուշարձանի տարածքում է ամփոփվել հայ պետական, ռազմական գործիչ, քաղաքագետ և իմաստասեր Գարեգին Նժդեհի աճյունի մի մասը, որն այնտեղ է հասել նրա եղբոր և մի խումբ նվիրյալների ջանքերով, հաշվի առնելով զորավարի ցանկությունը:

<<Սուրբ Հակոբ>> եկեղեցին կառուցվել է 18-րդ դարում, որը մարզի գործող եղեկեցիներից է: 2011թ. սկսվել են եկեղեցու վերանորոգման և համալիր կառույցների կառուցման աշխատանքները, որոնք ավարտվել են 2011թվականին: Համայնքի վարչական տարածքից քիչ հեռու գտնվում է Թանահատի վանքը, որտեղ 13-րդ դարում գործել է Գլաձորի համալսարանը:

Գլաձորի համալսարանը եղել է Միջնադարյան Հայաստանի նշանավոր ուսումնական կաճառ: Որպես համալսարան ձեռագրերում հիշատակվում է 1291թ-ից:

Այն հիմնադրվել է Թանադե վանքում՝ Խաղբակյան Պռոշ իշխանի նախաձեռնությամբ և Օրբելյան իշխանական տան ու Սյունաց մետրոպոլիտության աջակցությամբ: Գոյատևել է մինչև 1340-ական թվականները:

Համայնքի բնակչությունը զբաղվում է գյուղատնտեսությամբ, անասնապահությամբ և մեղվաբուծությամբ: Այստեղ կլիման նպաստավոր է այգեգործության և խաղողագործության համար:

Գլաձորրն ունի միջնակարգ դպրոց, մշակույթի տուն, մանկապարտեզ, բուժկետ, գրադարան, գործող 10 առևտրի կրպակներ: Էականորեն բարելավվել են համայնքի բնակիչների կուլտուր-կենցաղային պայմանները:

ՀՀ կառավարության կողմից 2002 թվականին հաստատվել է Վայոց ձորի մարզի Գլաձոր գյուղի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը, որում ներառված է 31 հուշարձան: